

# Ուրախ շաշկի



Թե կարող ես, կեր հակառակորդի «քարերը», իսկ հետո նաև նրա խաղաղաշտը:

Անհրաժեշտ է՝ քառակուսի հացի շերտ, 2 կտոր տարբեր գույնի պանիր, 2 կտոր սալյամի երշիկ, 2 կտոր եփած նրբերշիկ, կարագ կամ մայոնեզ: (երշիկեղենը կարելի է փոխարինել այլ մթերքներով, օրինակ վարունգ, լոլիկ, ձիթապտուղ և այլն):

1. Պանիրը կտրատիր հավասար քառակուսիների և դասավորիր հացի վրա շախմատի տախտակի նմանությամբ: Հացը նախօրոք կարելի է պատել կարագով կամ մայոնեզով:



2. Սալյամիից և նրբերշիկից մանր շրջաններ կտրատիր:



3. Ստացվում է 8 հատ խաղաքար՝ յուրաքանչյուր տեսակի խաղաքարից 4 հատ: Դասավորիր դրանք խաղատախտակի վրա:



Բարի օրը՝ ախորժակ :